

ՄԻՍԱՔ ՄԱՆՈՒՇՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Սառեւ հրապարակվում են Ֆրանսահայ նշանավոր գործիչ, Դիմադրական շարժման գործուն մասնակից, Ֆրանսիայի ազգային հերոս, բանաստեղծ Միսաք Մանուշյանի նամակները, Գրական ասպարեզ իշնելով 1930-ական թվականների սկզբներին, Մ. Մանուշյանը նամակագրական կայուն կապեր է հաստատել ժամանակի Ֆրանսահայ գրական գործիչների հետ, նրանց պարբերաբար տեղեկացրել իր աշխատանքների մասին, Այդ առումով հատկանշական են, Անատոլ Ֆրանսի բնութագրմամբ, «հայ մեծ հայրենասեր ու զերազանց բանաստեղծ»¹ Զոպանյանին ուղղված Մ. Մանուշյանի նամակները։ Հրապարակվող նամակները լուսաբանում են Մ. Մանուշյանի հայացքները արվեստի, պոեզիայի, ինչպես նաև բանաստեղծին ներկայացվող խնդիրների վերաբերյալ։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Ֆրանսահայ բանաստեղծ Գ. Սեմային հասցեագրված նամակը, որը պարունակում է նաև ինքնակենսագրական տեղեկություններ։

Նամակները պահվում են Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում՝ Ա. Զոպանյանի (բաժին III, № 4344, 4346—4348) և Գ. Սեմայի (№ 67) ֆոնդերում։

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

1

Paris, le 23-3-1931

Մեծահարգ

Տյար Ա. Զոպանյան,

Ստացա Ձեր նամակը։ Ուրախ եմ, որ բանաստեղծությունն Ձերի հաճելի է։ «Կ'ավագէ իր հունա-ին պատկերեն հափշտակված» չէի անդրադարձած հանգի պահանջին։ Կարելի է այդ վերջին տողը փոխել — պայպես. — Ենթադրեմք ու մեղմ երգ մը շրթներունս և կամ բառերու տեղափոխություն մը. —

«Ձևփյուռ մը թևի կը շոյի ծագուն

Պաստառը անհուն ու կանաչն հողին

Կը տարուբերվի ծագը անձկագին

Եվ հորդքով անվերջ՝ կ'ավագէ իր հուննս։

(Եթե հու(նն) չի խանգարեր արտասանական ներդաշնակությունը)։ Ինչպես որ Ձերի հաճո թվի, որովհետև conception-իս ձեռն շատ չի վնասեր։ Շնորհակալություններս Ձեր ցուցումներուն համար։

Խորին հարգանքներով Ձերդ՝
Միսաք Մանուշյան

2

31-12-1931, Եաթրե

Սիրելի Գեղամա,

Մեծ գիտեր որչափ կարոտցեր եմ քեզ։ Պիտի հարցնես անմիջապես իհարկե. — հապա ինչու՞ չեմ գար քեզ տեսնալու։ Պատճառը... Ո՛հ այնքան պարզ, այնքան բարդ է։ Դուն ինքզ իսկ կարող ես փնտրել քու մեջ։

¹ Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Զոպանյանի ֆ., բաժին III, № 9687 (Ա. Ֆրանսի անթվակիր նամակը ոմն Արսեն Ալեքսանդրի)։

Երկար առեմն է վեր, այսինքն հոս հաստատվելն է վեր, ինքդինքիս մտերմությունը կորսնցուցիր ևս: Գրեթե բան չեմ գրած. հակառակ, որ այնքան պահանջ կզգամ գրելու, չեմ կ'ապրիմ ֆիզիքապես և կգիրնամ, յուզ կկապեմ, սակայն հավատա սիրելիս, պիտի նախընտրեի պանրի հացով ապրել և ապահով ու մտերիմ՝ ես ինձ հետ: Չեմ տրտնջար իմ շուրջիններևս, ո՛չ, ամենքն ալ լավ մարդիկ են. ես ինքս եմ, որ չեմ կարող գոհանալ, չեմ կարող գոհացում առլ իմ ներքին աշխարհիս, որը ամենազլխավոր հարցն է ինքզինքիս հետ հաշա ապրելու և ուրիշներուն հետ ալ կարենալ հաղորդակցվելու: Ներշնչումը, որ ես կստանամ ուղղակի կյանքին և զայն կնկատեմ առանձնության մեջ, այս պայմաններու մեջ երբեք կենտրոնացում, ամփոփում չի գտներ իմ մեջ: Գործարանի մոլեխն ու ծուխն, մեքենային յուղեն ու կնպական աղմուկին մեջ ալելի մեծ թուխը կստանար հոգիս, բան թե հիմա, որ ալելի խաղաղ եմ:

Իմ գործս, հոս տեսակ մը սպասավորություն է, եթե արտաքին հարաբերությունները փոխան: Այս գործը դիս բնավ չի նվաստացներ, ընդհակառակը կկրթի, կյանքի մեջ է, որ ես ստացեր եմ ու միշտ կստանամ իրական մշակույթս (culture): Որեւ գործ ինձ համար հաճելի է, ժամանակավորապես սակայն: Կուզեմ ամեն ինչ մորթիս վրա զգալ, ձեռքովս շոշափել... Ամեն բանն առաջ սակայն, մեկ բան ինձ ամենեն հարկավորն է. այդ՝ մտային ուշիտանքն է, Լրբ ատոր միջոցը պակսի, ամեն ինչ բան մը շարժեր: Անդլալ օր ցանկություն կհայտենի զբաղվել պարտեզով: Զբաղվել ամբողջովին անով: Չեմ կրնար երեվակայել, թե որչափ մեծ հրեվանք պիտի զգայի անոր մեջ: Նախ որ ամենեն առաջ ես գլուղացի մըն եմ, ամբողջ մանկությունս հողին հետ անցուցեր եմ, հետո այդ կերպով պիտի սովորեի բույսերուն, ծաղիկներուն, պտուղներուն անունները, որոնց մեջ գրեթե տգետ եմ: Մանկապարտեզ երբեք չեմ զացած: Այբուբենը սովորելն անմիջապես հետո հայ ազգային կրթության մեջ սեղմվեր է գլուխս, բայց հայոց պատմությունը կատարյալ չեմ դիտեր, ոչ ալ Հայաստանի աշխարհագրությունը:

Մերելի Սեմաս, չեմ ուզեր քու ալ գլուխդ շարշարել իմ ճոգեպատմություններովս. կուզեմ անմիջապես հարցնել քու առողջությունդ, նաև մայրիկինը, Մարիինը: Կհուսամ ամենեղ ալ լավ եր: Շատ պիտի փափազեի նոր տարվո առթիվ Ձեզի գալ, բայց... բայց... ահ, անիծյալ բայցը:

Մերելի Գեղամս, նոր տարվո առթիվ, սրտի ամենաշերտ մաղցանքներս կուղղեմ Ձեզ բոլորիդ, մայրիկին, Մարիին և քեզի՝ անկեղծ համբույրներովս:

Եթե առիթ ունենաս ինձի գալու, բնավ մի Լրկմտիր, գիշերը հոս կպառկիս և մյուս օրը (անշուշտ կիրակի օր մը քեզի համար) միասին կանցնենք: Ինձ համար անհու՛ն հրեք-ձանք մը կըլլա առիկա: Գրե ինձի, թե ե՞րբ ազատ կլլլաս, որ քեզի գամ: Իրիկունները շատ անհարմար է վերադառնալու համար: Քեզի երկարորեն պատմելիք բաներ ունեմ, զբրական, հասարակական, իմաստասիրական և այլն:

Շարաթը Լրկու անգամ կեսօրե ետք հայկական՝ Մատենադարանը կերթամ առեմն մը ի վեր, հայ գրականության՝ պատմության՝ իսկ մասին ընթերցումներ ընելու: Այս տարի կուզեմ ճաննալ մեր գրականության՝ պատմության՝ և գլուխավոր գրողներն ու իրենց գործերը: Այս մասին ալ կխոսենք քեզ հետ: Ուրեմն à bientôt mon co-rédacteur en chef de la grande Revue Tchanguee. Ձեր՝ բարեներս Մարիին ու մայրիկին:

Համբույրներով քոյդ՝ Մ. Մանուշյան

Մեծահարգ

Տյար Ա. Չոպանյան,

Շնորհակալությամբ ստացեր եմ «Անահիտի» վերջին թիվը:

Սույն երկտողիս հետ ներփակ՝ Ձեզի կղրկեմ այն ոտանավորը, որուն հաղնած էիք: Քանի մը բառական փոփոխություններ մտցուցի անոր մեջ. ինչպես որ թելադրած էիք: Անդրադարձա մյուս ոտանավորներու թերութուններուն: Ձանոնք գրած էի հապճեպ և պաղ ներշնչումով, ինչ որ կզավաճանե արվեստին: Երկար méditation և երկունք անհրաժեշտ են՝ կարենալ մեծ գործ արտադրելու համար: Շնորհակալ եմ Ձեզմե, որ ինձի առթիվ ալիք ալելի ևս խիստ ինքնադատ ըլլալու, ինչ որ ես ինձի սկզբունք ըրած եմ արդեն:

Գրեւի շատ նյութեր ունիմ, դժբախտաբար ժամանակս կղավե ինծի առայժմ, կշանամ միշտ կատարելագործվել, անգոսնելով կյանքին ինձ պարտադրած խոշընդոտները:
Ընդունեցիք միշտ խորին հարգանքներս ու շնորհակալութիւններս:

Մնամ Ձերդ՝
Մ. Մաւնոյան

4

1-9-<19>-32, Շաթրնէ

Մեծահարգ

Տյար Ա. Ջոպանյան,

Հաճույքով ստացա Ձեր նամակը, ինձ համար խիստ շահեկան է մտիկ ընել Ձեր թելագրաթերներն ու նկատողութիւնները իմ բանաստեղծութիւններու վրա և ասոր համար իմ խորին շնորհակալութիւններս կհայտնեմ Ձեզի:

Իմբախտաբար չի պիտի կարենամ Ձեզի գալ կիրակի օր մը, որովհետեւ այս իրիկուն Մարսելիս կը մեկնիմ մեկ ամսով համար, եթե կարելի չէ զանոնք «Անահիտի» հաշորդ թղթին մէջ հրատարակել աչքի զարնող իրենց սխալներով կամ թերութիւններով, հոգ չէ, ցատկերիդ պահպնէ, ես օր մը կուգամ զանոնք կ'առնեմ:

Դարձյալ կիսնդրեմ Ձեզն, որ «Անահիտի» վերջին թիվը ինծի զրկելու շնորհիւ չմոռնաք իմ Շաթրնէի հասցեիս, որ է՝ 44, av. Jean Jaurès, Chatenay-Malabry (Seine).

Յոնսութիւն:

Կմնամ խորին հարգանքներով Ձերդ՝
Մ. Գ. Մաւնոյան

5

9-2-<19>-33, Շաթրնէ

Մեծահարգ

Տյար Ա. Ջոպանյան,

Սույն նամակիս հետ ներփակ՝ Ձեզի կըրկեմ այն բանաստեղծութիւնը, որու մասին խոսեցա Ձեզ անցյալ օր: Կկարծեմ, որ բավական հղկված ոտանավոր մըն է և կհուռամ, որ Դուք ալ պիտի հավնիք անոր:

Այն պահուն, երբ կգտնվեմ ներշնչման ազդեցութեան տակ, բոլոր ուժերս կլարեմ գրածիս վրա և կշանամ, որ անիկա կատարյալ ըլլա թե գեղագիտական և թե խորքի տեսակետով: Իմ ամբողջ անհատականութիւնս անկեղծորեն կշանամ դնել անոր մէջ. սակայն երբ կավարտեմ զայն, ալ չեմ ուզեր անոր վրա նայել քանի մը օր, որովհետեւ վերջին պահուն շատ հավանորեն կարող եմ պատռել զայն, տեսնելով, որ չեմ կրցեր արտահայտել ինքզինքս ուժեղապես: Քանի մը օր վերջ, երբ զայն կկարդամ, ինքզինքս նաև կգտնեմ հարազատորեն, սակայն ալ որեւէ սրբագրութիւն ինձ անախորժ և անտեղի կթվի, որովհետեւ կզգամ թե ալ զգացումները չեն, որ ինծի կթելադրեն այդ բանը, այլ գեղագիտական ըմբռնումը կամ նախապաշարումը: Ինձ համար, երբ գեղագիտութիւնը շաղախված չէ զգայնութեան հետ, շատ ծիծաղելի է: Գեղեցիկն որոշողը, կրթված և բարձր զգացումներն ըլլալու են և ոչ թէ տրամաբանութիւնը կամ մտքին déterminé հաշիվները: Ամեն բանն առաջ արվեստը կպահանջե անկեղծութիւն և խորշանք ամեն այն բաներին, որ շինծու են: Մարդ ինքզինքն արտահայտելու է, ինչպես որ ինք կզգա, ըլլա այդ արտահայտածը միշակ, ըլլա բարձր, այդ երկրորդական է և ուրիշներու որակածն է: Եթե կուզե հասնել իր նախորդներու կամ դարավոր մեծ դիմքերու աստիճանին, հարկ է, որ անվերջ պայքարի ինքն իր հետ, այսինքն հարատեւ աշխատի առանց իր ինքնատուութիւնը (անկեղծութիւն) կորսնցնելու:

Ինձ համար մեծ երջանկութիւն մը պիտի ըլլար ունենալ երբեմն մտերմիկ խոսակցութիւններ արվեստի և գրականութեան շուրջ, երեք բանաստեղծներու հետ: Շատ շնորհակալ պիտի ըլլամ Ձեզն եթե երբեմն այդ առիթը տաք ինծի:

Կիսնդրեմ շնորհիւ զրկելու «Անահիտի» վերջին թիվը, Շաթրնէի հասցեիս, որ միշտ նույնն է՝ 44, av. Jean Jaurès, Chatenay-Malabry (Seine),

խորին հարգանքներով Ձերդ՝
Մ. Մաւնոյան